



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ  
ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Վեղի

10/03/2023

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3  
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 17 անդամներ:

Ավագանու նիստից հարգելի պատճառով բացակայում էին՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամներ՝ Վահրամ Մանուկյանը, Արսեն Կարապետյանը, Արմեն Ղազարյանը, Գայանե Սեդրակյանը, Արամայիս Գրիգորյանը

Ավագանու նիստից անհարգելի պատճառով բացակայում էին՝ «Իմ հզոր համայնք» խմբակցության անդամներ՝ Նարինե Մարտիրոսյանը, Շողիկ Գյուրջյանը, Արամայիս Գալստյանը, Մելքոն Տալոյանը և Գոհար Մարգարյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Հայկազ Նազարյանը, Անդրանիկ Ավետիսյանը, Վեղի համայնքի ենթակայությամբ գործող ՀՈԱԿ-ների տնօրենները

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գարիկ Մարգարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հրայրա Ստեփանյանը

**Լսեցին 1.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ. Գ. ՄԱՐԳՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի համաձայն, ղեկավարվելով ավագանու կանոնակարգի 71-րդ կետի դրույթով, Վեղի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Վեղի համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 10-ի հերթական նիստի օրակարգը.

1.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԻՍԱՅՈՂ ՎԵՂԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՐԶԱԴԱՇՇԸ ԵՎ ԿԻՑ ՏՐԻԲՈՒՆԱՆ «ՎԵՂԻ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՏԿԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԻՍԱՑՈՂ ՎԵՂԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-004-0333-0054 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.06 ՀԱ. ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ԼՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ/ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.4. ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԻՍԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

Մինչև նիստի օրակարգի հաստատումը համայնքի ղեկավարը դիմեց ավագանու անդամներին՝ նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու մասին,որի վերաբերյալ ավագանու անդամների կողմից առաջարկներ չներկայացվեցին: Փոխարենը հանդես եկավ աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Ա.Ավետիսյանը,ով դիմելով նիստը վարողին և ներկա ավագանու անդամներին նշեց, որ հրատապությունից ելնելով անհրաժեշտություն է առաջացել նիստի օրակարգում ընդգրկել ևս մեկ հարց, այն է՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 212-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և պատճառաբանեց,որ նշված հարցը նիստի օրակարգում ընդգրկված մյուս հարցերի հետ չի ծանուցվել ավագանու անդամներին, քանի որ Վեղի համայնքի 2023 թվականի բյուջեում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է «Վեղի համայնքի կոմունալ սպասարկում» բյուջետային հիմնարկի լուծարման և նոր ձևավորված «Վեղի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության կողմից պետական գրանցման փաստով: Ա.Ավետիսյանը նշեց, որ նշված հանգամանքներով պայմանավորված նաձկին բյուջետային հիմնարկի աշխատակիցները պատշաճ ծանուցված լինելով հիմնարկի լուծարման գործընթացի մասին, ծանուցման ժամկետները լրանալուց հետո ազատվել են աշխատանքից: Բացի այդ, Ա.Ավետիսյանը հավելեց, որ բյուջեում համապատասխան փոփոխություններ կատարելը պայմանավորված է նաև նոր ՀՈԱԿ-ի աշխատակիցների փետրվար ամսվա աշխատավարձի վճարման, ինչպես նաև «ՀԷՑ» ՓԲԸ-ի նկատմամբ ունեցած վճարման պարտավորությունները կատարելու համար:

Համայնքի ղեկավարը առաջարկեց կողմ քվերակել նիստի օրակարգում նոր հարց ընդգրկելու վերաբերյալ Ա.Ավետիսյանի կողմից առաջարկված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 212-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» համայնքի ավագանու որոշման նախագծին, որը արժանացավ նիստին ներկա ավագանու անդամների հավանությանը, հարցը ընդգրկվեց նիստի օրակարգ:

Անրադառնալով նիստի օրակարգում ընդգրկված «ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԻՍԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 4 հարցին՝ ծավալված քննարկման արդյունքում որոշվեց նշված հարցը հանել նիստի օրակարգից, պատճառաբանելով, որ ներկայացված գույքագրման փաստաթղթերում առկա են անճշտություններ, որոնք ենթակա են ճշգրտման: Համայնքի ղեկավարը առաջարկեց ստեղծվելիք հանձնաժողովների միջոցով կատարել կրկնակի գույքագրում՝ գույքագրման հանձնաժողովների աշխատանքներին մասնակից դարձնելով համայնքի ավագանու անդամներին: Առաջարկը հավանության արժանացավ նիստին ներկա ավագանու երկու խմբակցությունների անդամների կողմից և որոշվեց օրակարգում ներառված թիվ 4 հարցը՝ «ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԻՍԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» հանել նիստի օրակարգից:

*Կողմ -11*

*Դեմ-0*

*Ձեռնպահ-6*

- |         |       |       |
|---------|-------|-------|
| 1.----- | ----- | ----- |
| 2.----- | ----- | ----- |
| 3.----- | ----- | ----- |

- 4.-----
- 5.-----
- 6.-----
- 7.-----
- 8.-----
- 9.-----
- 10.-----
- 11.-----

Որոշումն քննունված է/կցվում է N 29-Ա որոշումը/

**Լսեցին 2**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԻՄԱՑՈՂ ՎԵՂԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՐԶԱՂԱՇՏՆ ԵՎ ԿԻՑ ՏՐԻԲՈՒՆԱՆ «ՎԵՂԻ ՖՈՒՏԲՈՒԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ. Հ. Նազարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հաշվի առնելով ««Վեղի» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության տնօրեն Գ.Մկրտչյանի 22 փետրվարի 2023 թվականի գրությունը, **Վեղի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Թույլատրել ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի ղեկավարին՝ Վեղի համայնքի սեփականություն հանդիսացող, Վեղի քաղաքային բնակավայրի Թումանյան փողոց 1-ին անցուղի 2 հասցեում գտնվող 03-004-0085-0012 կադաստրային ծածկագիրը կրող մարզադաշտը և կից տրիբունան անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել ««Վեղի» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպությանը՝ անորոշ ժամկետով:
2. Սահմանված կարգով ««Վեղի» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության հետ կնքել տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

<i>Կողմ -17</i>	<i>Դեմ-0</i>	<i>Չեն նայահ-0</i>
1.-----	-----	-----
2.-----	-----	-----
3.-----	-----	-----
4.-----	-----	-----
5.-----	-----	-----
6.-----	-----	-----
7.-----	-----	-----
8.-----	-----	-----
9.-----	-----	-----
10.-----	-----	-----
11.-----	-----	-----
12.-----	-----	-----
13.-----	-----	-----
14.-----	-----	-----
15.-----	-----	-----

16.-----  
17.-----

Որոշումն ընդունված է/կցվում է N 30-Ա որոշումը/

**Լսեցին 3**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԻՄԱՑՈՂ ՎԵՂԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-004-0333-0054 ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.06 ՀԱ. ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ԼՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ/ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ. Հ. Նազարյան/

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի դրույթներով, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով 19.08.2021 թվականի ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը, հաշվի առնելով երկկողմանի ծնողագուրկ լինելու հանգամանքը և Ստեփան Անուշավանի Միքայելյանի /ծնված 11.02.2002թ. ն/ք 011903218, տրված 27.01.2021թ./ անհատույց սեփականության իրավունքով տնամերձ հողամաս հատկացնելու խնդրանք-դիմումը՝ **Վեղի համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի ղեկավարին՝ Վեղի համայնքի սեփականություն հանդիսացող Վեղի քաղաքային բնակավայրի Ազատամարտիկների փողոց 36 հասցեում գտնվող 03-004-0333-0054 կադաստրային ծածկագիրը կրող 0.06 հա բնակելի կառուցապատման հողամասը անհատույց օտարել երկկողմանի ծնողագուրկ, 44-օրյա պատերազմի մասնակից Ստեփան Անուշավանի Միքայելյանին՝ սեփականության իրավունքով:

2. Սահմանված կարգով քաղաքացի Ստեփան Անուշավանի Միքայելյանի հետ կնքել Վեղի քաղաքային բնակավայրի Ազատամարտիկների փողոց 36 հասցեում գտնվող 03-004-0333-0054 կադաստրային ծածկագիրը կրող 0.06 հա բնակելի կառուցապատման հողամասի նվիրատվության պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

<b>Կողմ -17</b>	<b>Դեմ-0</b>	<b>Ձեռնպահ-0</b>
1.-----	-----	-----
2.-----	-----	-----
3.-----	-----	-----
4.-----	-----	-----
5.-----	-----	-----
6.-----	-----	-----
7.-----	-----	-----
8.-----	-----	-----
9.-----	-----	-----
10.-----	-----	-----
11.-----	-----	-----
12.-----	-----	-----
13.-----	-----	-----
14.-----	-----	-----
15.-----	-----	-----
16.-----	-----	-----

Որոշումն ընդունված է/կցվում է N 31-Ա որոշումը/

**Լսեցին 4**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 212-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ. Ա.Ավետիսյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկն ու ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի զեկույցը, Վեղի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 212-Ն որոշման NN 1, 2, 3 և 4 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

<i>Կողմ -17</i>	<i>Դեմ-0</i>	<i>Ձեռնպահ-0</i>
1.-----	-----	-----
2.-----	-----	-----
3.-----	-----	-----
4.-----	-----	-----
5.-----	-----	-----
6.-----	-----	-----
7.-----	-----	-----
8.-----	-----	-----
9.-----	-----	-----
10.-----	-----	-----
11.-----	-----	-----
12.-----	-----	-----
13.-----	-----	-----
14.-----	-----	-----
15.-----	-----	-----
16.-----	-----	-----
17.-----	-----	-----

Որոշումն ընդունված է/կցվում է N 32-Ն որոշումը/

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ  
ՏԻԳՐԱՆ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ  
ՌԱՖԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԱԼՈՒՍՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ  
ՆԱՐԵԿ ՀՈՌԻԿՅԱՆ  
ԱՐՄԵՆ ԱՆԴՐՅԱՆ  
ԷԴԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՍԵՐՈԲ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
ԱՐՄԵՆ ՄԻՐԶՈՅԱՆ  
ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ  
ՔՐԻՍՏԻՆԵ ԹՈՒՆՅԱՆ  
ԱԶԻԶ ՀՈՎՍԵՓՅԱՆ  
ՆՇԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ  
ԱՆԺԵԼԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ  
ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
ԱՐԱՅԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

*Նիստն արձանագրեց՝* Հրաչյա Ստեփանյանը-----